ԿԻՐԱԿԻ, 23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1908 Թ. Воскресенье, 23 Ноября 1908 г.

# ՇԵՓՈՐ

Литературный, общественно—политическій и экономическій еженедѣльный журналъ

# ШЕПОРЪ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԻՆՆ Է 7 ԿՈՊ. ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ЦѢНА 7 КОП.

Временный адресъ: Б. Морская, д. Междумова, кв. № 10 Редакція „Шепоръ„

№ 14 ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ № 14

Երաժշտական խանութ **Գ. Ի. ԻԻՆԴՐԺԻՇԵԿ** Միխայլովսկայա փ. տուն Գոլովինսկու

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԼԱՒ ՑԱՆԿՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ.

Մենաներկայացուցիչ «ԳՐԱՄՄՕՖՕՆ» ակցիոներական ընկ.

11—25

Բ Ա Ց Ա Ռ Ի Կ   Բ Ա Ժ Ա Ն Մ Ո Ւ Ն Ք

ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾԱՐԱՆ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ե. Ս. ԿՈԼԽՕԶԵԱՆԻ

Նոր լոյս են տեսել յետևեալ պապիրոսները՝

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| «Прогрессъ» | 20 | штукъ | 15 к. | | | «Реформа» | 20 | штукъ | 6 к. |
| «Ананасъ» | 25 | » | 25 к. | 10 шт. | 10 к. | «Арабскія» | 20 | » | 5 к. |
| «Кальянъ» | 25 | » | 15 к. | 10 „ | 10 к. | № 6 | 20 | » | 5 к. |

Ստացուած են բոլոր ծխախոտավաճառների մօտ Գլխաւոր պահեստ՝ Меркурьевская ул., д. Цатурова № 10.. 50—1

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիւղատնտեսական խնդիրներ — Ամսօն. Հայկական աֆիոն—Շահէն. Բանաստեղծական, Դեպքի Թաթոսի ... — Բաւական Աշխատաւորների կեանքից. Թղթակցութիւններ. Նամակներ խմբագրութեան. Յայտարարութիւններ.

## ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

* * *

Նահապետական տնտեսութիւնների ժամանակ, երբ երկրի ազգաբնակչութիւնը [illegible]

digitised by A.R.A.R.@

տանները իրանց ուժեղ ու փարթամ անհոգ-ղութեամբ և բոյսերի երկարակեցութեամբ միենոյն մակերևոյթի վրայ եղած նուազ բոյ-սերին ոչընչացնում ու իրանք աւելի ու աւելի էին փռւում։

Սակայն մարդկային ցեղի առեցողութեան հետ, աճում է վարելահողերի ու արօտների պահանջը. անտառները սկսում են անխնայ կերպով կտրատման ենթարկուել և նրանցից ա-զատուած տարածութիւնները աւելի բարձր կուլտուրայի յատկացնել. Նախկին լայնարձակ ու երկրածիր անտառները, որոնք դեռ ոչ այն-քան հեռու ընկած անցեալներում, ամբողջ Եւրոպայի երկու երրորդ մասն էին բռնում, այժմ հազիւ հազ ամբողջ տարածութեան մի չորրորդական մասին է հաւասար*)։ Եւ այսօր անտեսագիտութեան մէջ ամենախոշոր կարեւո-րութիւն ունեցող հարցերից մէկն է, թէ ար-դեօք պէտք է թոյլ տալ, որ անտառների ոչ-նչացումը շարունակուի, թէ որոշ չափ է սահմանել։ Այդ հարցին կրկնակի տեսակէ-տներից կարելի է մօտենալ՝ նախ համայնական և ապա մասնաւոր տնտեսութիւնները 'ի նկատի առած։

Առաջներում անտառների համայնական նշանակութիւնը աւելի էին բարձրացնում, քան թէ իսկապէս նա ունի. այսպէս օրինակ անտառներին էին վերագրում անձրեւների քա-նակը, կարգաւոր պահպանութիւնը ամառային զով ու ձմեռային տաք եղանակների բարէ-խառնութիւնը և այլն և այլն**). բայց գիտու-թեան սեփհականութիւն է արդէն՝ որ ան-ձրևների առատութիւնը ոչ թէ անտառների քանակից է կախուած, այլ երկրի աշխարհա-գրական դիրքից, քամիների ուղղութիւնից և նրանց ուղղութիւնից։ Ճիշտ է, անտառոտ տե-ղերում անձրևների քանակը մի փոքր աւելի է լինում, քան այդ միենոյն վայրը առանց անտառների. ճիշտ է որ ձմեռային ցուրտը և ամառային տաքը մի քիչ աւելի մեղմ է լինում քան դրսում, բայց այդ տարբերութիւ-նը՝ այս օրինակի համար ամենայաջող դէպ-քերում, հազիւ հազ մի քանի աստիճանների կան տարբերութիւն է հասնում. մի տարբերու-թիւն՝ որը շատ հեռու է մի երկրի գիւղատն-տեսական արդիւնաբերութեան վրայ ահագին նշանակութիւն ունենալուց, ինչպէս այդ ըն-դունում էին անցեալներում***)։

Ներկայումս գոնէ մինչև այժմ եղած գիտական հետազօտութիւնների վրայ հիմնւե-լով, անտառների համայնական օգուտը հետե-ւալումն են որոնում։

Անտառներում բուսած խոտերի տեսակ-

*) I. Conrad. Politische Oeconomie Bd. II. երես 124.

**) Von der goldr. Handbuch d. laedWirtscçbit II.Bd երես 30.

***) Schwappach. Forstwissenschaft երես 50.

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԴԵՐՁԻ ԹԱԹՈՍԻ ԴԵՐՁԻՐԱՆ

Կազէթ կիրող ախպեր, շատ խնդրումըմ ջափա քաշիս կազէթատ մին քանի բոլ բո-ղազ մարդկանց ծէնը կ'արցնիս, չինըք ամէն օր մեր տընըցէն հըլօխս գժանգա անում, թա հնգեր հրեւանու քշտէ բեարուս բեարաթ ըլինը, եանի թա դեարգի Թաթոսը էնքան տարի, որ Աղջամուղը, Շօշեայ դալումը գեար-գօթին անար, էլ բեաց բեադգացա չի մնար, որ հրանքէ մահուդ չօխան, զառ բալթան, վազմէնաւը տրեած ալ փայը, Թվէրքէն ա-տառ կանանչ մօրի ըրխալուղը կարար, վէր եշօղէն քէփը կեար, պրեանին ճիբը քինար, մէկզ ընդիեր նմանի գեառ փէշակը թողած ե-կալս բռօր Բալախանու ցէխէն, մօրէն մազու-թին մաչին—սխրանչօթին ա անում։

Էս մեծ մեծ խօսօղներան մինը մեր դա-լին գռւնայի Աւանէսին տղայ բախկալ Գրիգորի'ս, որ ղյան քեօլը հւաքած եկալս բռանեց մին գիւքան պեց ըրաւ, բախկալ անումը փոխալ բաքալէյի տիրալ. լիառ փըռ-ըընգոնի տալսւ տասուրա անում. ամեօր ա-սումըն հարիւր կնիժկաւ զարօրա պեց թողում։

Ախպէր կազէթ կիրող, թա եօ հուեց թուղեցի իմ ասկի փէշակս, իմ մեկրատս Մնա-նուշս, ծալօղի կէզս, իւթու դազգեահս, ալ-մասս ասեղս, շաքիրդ քեարգեահս, զառ մեւշ-տարիքս, տրա հեաէ եօ օղումըմ մեր դըլըցէ մին քանի մարդկանց հըօկցնիմ, որ էլ սա-կան կլխան խօսին վէէ, նհախ տեղան մեր տնացան սէրսը ընձանս կըտրցնին, մեթամ թա եօ բէնամուս մարթըմ։ Ախր եօ հուեց չի թուղի իմ փէշակը—վէր մեր ջահիլ ջհիլ, հու վէր Բաքուա իրեսը տեսնըմա, էն կօկէէկ կօկ-լէկ կեցուած փռանգու թաղու նման պէմբակում պահած հարուստ տղոցը, իրեք փէշկանի հա-յամարի կնգայ իւեղու նման պէնջակը, նեղ հօփ տուած շալվարը կեցնէրէն, թեազա տրւա-եկած մին, գրադը դեալլաքի ջամի նման պռատած զլարէքը կխընէրէն, իրանք էլ ընդհանցամս ըրենակ երկայած մարթը մին պէնջակըն առնում ջուբեքին իլած չիլածաւը իրանց կօկում, կեամ ընգնում դալան շընըթ-կնեն, էն մնացած ջահիլ ջհիլին էլ խելքս տանում։ Համել մին պէն աւիմ. էնքան էս անդար մօղը չի մեր մաղամօրթէն խելքս

digitised by A.R.A.R.@

ները ու ծառերից թափուած տերևները փթելով տասնեակ տարիների ու դարերի ընթացքում կազմել են սևահողը կամ հումուսը. որքան հին է մի անտառ, համեմատաբար այնքան անգամ աւելի հաստ հումուսի շերտ ունի։ Հողի այս տեսակը գիւղատնտեսութեան մէջ յայտնի է իր ուժեղ ծծողական յատկութեամբ. անձրևային եղանակներին նա սպունգի նման ագահաբար կլանում է անձրևաջուրը և ամբողջ հումուսային շերտի յագեցումից յետոյ միայն աւելացած ջուրը դանդաղօրէն դէպի ստորակայ ձորերն է գնում։

Հումուսահողի մէջ ամբարուած ջուրը՝ աստիճանաբար դէպի ներքևի շերտերը մաղւելով և երկրի կեղևի մի յարմարաւոր խոռոչում իրեն հաւաքելով, աղբիւրների ակունքն է կազմում. ուրիշ կուլտուրաներին յատկացրած հողերը ևս, հասկանալի է որ իրանց հերթին նպաստում են աղբիւրների առատութեան. սակայն, ինչպէս ոչ նոյն չափով, ինչ չափով անտառները, որովհետև նախ անտառները անհամեմատ աւելի հաստ հումուսային շերտ ունեն և ապա անտառահողերի մակերևոյթը անտառների շնորհիւ արևի ճառագայթման, քամու և ուժեղ տաքացման չէ ենթարկւում, գետինը խոնաւ կերպով չէ չորանում, գոլորշիներ շատ չէ կորցնում. այսպիսով անտառներն են առաւելապէս այն յարատև ջրամբարները, որոնք տարւայ բոլոր եղանակներում, համարեա թէ նոյնանման տեմպով, ջուր են մատակարարում աղբիւրների ակունքին։

Անտառազուրկ կամ նոսրանտառ բուսականութիւնից զուրկ վայրերում տեղացող անձրևները հողաշերտի մի չնչին մասը միայն թրջելով ներթափանցութիւն են ունենում. իսկ աւելացրած ջուրը բուպկաբար սրնթաց կերպով առանց որև է արգելքի հանդիպելու, իր հոսանքի մէջ առնելով և հողի քայքայուած ու փուխրացած մասերը հեղեղելով ճանապարհի վրայ ընկած ամեն մի մշակուած տարածութիւն, դէպի ծովն է սլանում և դէպի ծովի յատակը տանում գիւղատնտեսութեան համար էական նշանակութիւն ունեցող տիղմը. այդ է պատճառը, որ անտառազուրկ տեղերում միևնոյն գետը մերթ անանցնելի է դառնում, մերթ չորանում, մերթ վերստաչափ տարածութիւն է բռնում, մերթ առւակի կերպարանափոխւում։

Բայց այդպէս չէ անտառաւէտ տեղերում. այդ վայրերում մենք չենք պատահում կամ շատ հազւադէպ դէպքերում ենք հանդիպատես լինում հեղեղների. արևի ճառագայթներից դրկւած հողը միշտ խոնաւ ու կապակցւած դրութեան մէջ է ու ջրային հոսանքներով տարւելուն անմատչելի։ Անձրևաջրի մի քառորդ կամ մի երրորդ մասը հէնց ծառերի

---

տանում. հինչքան էա զնեար մնացած չորերին իմանօթիւնը. ախր հու չի գիդում, որ մեզ մեան խուրզա փէշաքեարներին տանը պրիչակ անողը էն բարեկօնու աշտանակէներին մեան փափրիկներա, էն ալի աւլան, ամէն մինը օթ աչկանէ գիւքիաննէն, ալխնէրան տրաքում պէնչաճէ պալատռնա։ Ախր հու չի գիդում, որ մինչի գետրգի Թաթոսը, քչերը ցիրեկ ըրած, ցիրեկը քշեր, ասեղին բիզ տալու չօրս օրումը մին չուխա ա եա թեափմա պալտօն կարելը, փափրիկը երկու սհաթումը քառասուն ծերը փռանդի չօրա տէւս պիրում բազար։

Հու չի գիդում, որ ըլէն ճմփոցը հէտի ճռճռան չեարմա կարող ուստա Պէտրին, տանը ինձ նման աղքատ տէրտած, մին ջոխա չեարման, որ հինչքան ջանէն զոռա անէ անջախ անջախ մինչև գալիթ տալը չիրիշիլը, չուրանալը, կարելը իրեք օր ք'քաշի, կրակ ընգած փափրիկը իրեք օրումը հազար ջոխա տէւս ա բերում էն գրադէն եր ածում։

Հարուստէն թամանե էլ Սասուն կարէ, էնքան հայս հալըն անում, աղրանք տէւս պերում, բազարումը մին մինու աժւգուլ կինները իմըկցնում, վէր մեզ նման փէշաքեարներին փայը Յուսմա երկաթան անէլը։ Դէ մինը ինի վէչ աղի, եւ գուլունաչու տղայ, իմ ցաւասանքաս տու, հունց վէր լհա անքալուրս. օրը վեց շահու երկաթան անէլաւ ըլէն անէը օղլուչաղ կ'պահվէ։ Ախր, թա մինակ եսմ էա օրը ընգալ, թէզ լօխ էլ կեան մարթը մին մահակ եր կալած ջանիս ընգնին, կխեղդաճաղերս ալիւր անին։

Ախր ամէն օր մեր տնացուն ասում եմ, ըռճնակըմ պէրում մէր գալին բաշմախչի Մուքոն, շլապկայ կարող Ղուգեասին, սապօժնիկ Պէտոուն, եա հեալա ընդահանցըմ ասում հիւր որ մեր տնացին ճնանչումա։

Ամմա եա գիդումըմ, որ ինձ նման, մին քանի հարիւր ուստա կայ իւրանց չագիրդ քեարգեահացը, որը Բալախանի, որը չօրնի գորոդ, որը Բիբի-Հէյբաթ, հու վէր սիւքանչիա, հու վէր վեղրաչի, հու վէր արաբաչիկ. ամմա դէ շատ չատէրն էլ հպարանպըն։

Մէկը, իմ խօսքս էնա, թաշխեաւ, եա ըսաձ հինչ թախսր օնիմ, որ մէր օրվան գուլունչուն աղան իւրան կնգանաւը, իւրանց ցաւը գեարզը տեր թողած, իմ սիւքեանչօթիւնըս աղօւնձըն չինալ, քցալ պերանէն, հէտեղ նստումըն եր կենում, թեա գեարգի Թաթոսը բէյնամուս մարթա, կնգանը պերալըս մին հա-

digitised by A.R.A.R.@

ծառերի վրայ են թառում. գետին թափուած անձրևի մի հսկայական պրոցենտը, եթէ ոչ ամբողջը, սևահողն է կլանում, իսկ աւելացած ջուրը, որպիսին պատահում է յորդ անձրևների ժամանակ, բոյսերի արմատներով համբըն-թաց կերպով յատակ ու ձմեռ դէպ հոսում է հոսում. Ուրեմն, անտառները ոչ միայն կանոնաւորում են տարւայ տարբեր եղանակներում հոսող ջրերի քանակը, այլ և ոչնչացնում են դրանց աւերիչ մեխանիքական ուժը.

Մի հանգամանք ևս անտառների համայնական նշանակութիւնը զգալիօրէն բարձրանում է այն երկրներում, որտեղ քամիները թէ իրենց ցրտութեամբ և թէ մեխանիքական ուժով վնասում են գիւղատնտեսական բերքերին. այդպիսի դէպքերում յարմար տեղերում աճած անտառները իբրև մի պատնէշ են հանդիսանում նրանց վնասակար ուժը գիւղատնտեսական բերքերին անվնաս դարձնելու չափ-իջեցնելու.

Անտառների մասնաւոր տնտեսական նշանակութիւնը կայանում է նրանում, որ նրանք ևս իրենց կողմից արտադրում են մարդկային պահանջներին բաւարարող կամ եթէ տնտեսագիտական տերմինոլոգիայով արտայայտուելու. լինելով՝ սպառման ընդունակ արտադրութիւններ՝ այսպէս օրինակ անտառներից ենք ձեռք առնում փայտը, իսկ կողմնակի կերպով խեժ, կեղև, խոտ, միրգ և այլն. սակայն եթէ տնտեսութեան պահանջը մարդկային պահանջներին բաւարարելն է, ապա նրա գլխաւոր զսպանակը քիչ աշխատանքով մեծ արդիւնք ստանալն է. այդպէս առած զուտ արդիւնք է տնտեսութեան առաջ մղիչ ուժը. Համեմատենք գիւղատնտեսութեան մէջ զանազան տեսակի մշակումներից ստացւող արդիւնքների քանակը.

Ըստ Ֆոն Դիր Գոլցի՝ Գերմանիայում մինչև 1890 թուականները միջին թւով ամեն մի հեկտար տարածութիւնից զուտ արդիւնք վերցնում էին՝

| | | | | |
|---|---|---|---|---|
| Վարելահողերից | 20% | հաւասար | 17,6 | մարկ. |
| Մարգերից | 48% | „ | 18,0 | „ |
| Արօտներից | 36% | „ | 5,6 | „ |
| Անտառներից | 40% | „ | 4,4 | „ |

Վերոյիշեալ թւերը ցոյց են տալիս, որ թէև անտառները համեմատաբար մակերևոյթից աւելի քիչ զուտ արդիւնք են տալիս, քան միւսած մշակումները, բայց աշխատանքի արդիւնաւէտութեան կողմից աւելի բարձր են կանգնած քան վարելահողերի ու արօտների մշակումը. Սակայն—մեր այս վերջին դիտողութիւնը ճիշտ կլինէր, եթէ զրութիւն չունենար հողային հասոյթը.

Չնայած նրան, որ հողը. աշխատանքի արդիւնք չէ՝ ապա ուրեմն և կապիտալ, բայց արդի մոնոպոլիստական հասարակակարգերի մէջ նա՝ իբրև արդիւնաբերութեան միջոց, սեփական

ւու պիտնում կոչ անել, կարում չի թէ իւրանց բողազնենելու պահէ. Ակնէր, որ մինակ ես ինիմ մէկ մեր հարսը, բաւեր միան չնէրին հաչոցին երկու չեմ. առանը հասած ախիջիկ անիմ բաժ պենէրը ձարթեա. երա չեաւ չի լոսեկը.

Մինը սաւի ոչ, մ զուանայու տղայ, քաւհեար որ սաղ ինւար հա (վէղը խաբար չի առնի էս դիւնեա էլ ակի մին ձարթ չար) մէկզ տմբլաչի Թոչանին օրը չար ընգմլ. խաչ, չեա Թուչանը ամբլան եր տերաւ, իւրան քեաթհայ պարիկամ Հաջի Սպեանդիարը դրամափան առաւ տերաւ ծեռքին, հանցաւ քեօչը եօլա առնէ. ընէլ մին քանէ հեա զաղզըբաւ, խաբար բրաւ, պաչինկու հէտէ փող չ'կար, չիւնջի Հաջի Սպեանդիարը փեսա ար ընգալ (ասող կայ որ միթամ էա Հաջի Սպեանդիարը հանէ ծկայա Բաքուա համֆոցան փող ինքօնի. ընդանանք էլ բարա աժեաղը ժռաացած աստին. որ մէնէն իւրան անա չաւ ձարթ օնին. էն ձարթը աստւմըն թիւնը ազկաւէրաւ, հայրեաթ որ մին չաւ հարց ու փորց անիմ, անցեալ կ'հիրիմ ընգրա անուժը. աստւմըն սաղ Բաքուցըմը չաւ իլածաւ, ինքն էլ քեաճենեւա) էս վէրջէրըմա էլ Գոլատուգանց Թեաուպարը մին քեօհնա աէյլիքան ար տերալ ծեռքէն. էն էլ ասէսաւ, որ քաաշ դեխոր անում, էլ ուրիշն եչիւ ոչ. մէկզ ծէնը Աստուծոյ կըտրածէն միան կարօղա, այ չաւ կինար, որ ակի եր էլ չինար համ էնքան էն հոսեզատանը, էն զօնախլուղումը նստից՝ թա հեպ, հարսնչ, Կուճայր ծեռքնեան ընգաւ, խնամին, ադին խաւնար կացէկ. Թոքը փեսա, հաջոձա, որ աղնոնէս աբիսակ բրաւ. տրաւ էն դրաղէն.

Մէկզ ծեղ բմ հրդնում. հէաա էրից ալլօր չարդիւզիւլին ազան փոզօնը ծիանդաւէ, եա Մեաչաղի Դաւգաւը իւրան գիլիջանձնէրաւը, նեօքեարներաւը, եա չէ մին սիւրու արարաչի, գրէհաւր, ծիաաօր, էչաաար էա Թեազեա՝ առանց ասլու եղմից ընող, ոչ կեարի առող, ոչ աէրման, ոչ աւաղին քեաաաչ աաղըն աաաէվող աւթանգիլերը աէւա կնաչին ծաա եմ եա չըն ընգնելէւ.

Միբէլէ կաղէթ կերող, թող լեւ էլ քաւդիզան, որ էս քէնամաւս ձարթ չեմ մաղին փափրիկ աղամ անողին անը մին Բալախանաւ Նոթի ամբարի ալաւ ընգնի, որ մէկ միան խուրզա փէշտքեարներին անը բանեցի, մախլաւ...

Հէնա գլիխս քութման փէծած, նամոկը

digitised by A.R.A.R.@

կանգնել է կապիտալի շատ և շատ սահմանա-յատկութիւնները։ Ինչպէս որ կապիտալը մուտք է գործում այն օրինակի ձեռնարկութիւնների մէջ, որոնցից նա աւելի առաւելութիւններ է վեր-ցնում, այնպէս էլ հողագործը իր կալուածքի մէջ մտցնում է արդիւնաբերութեան այնպիսի եղանակներ, որոնցից նա հնարաւորութիւն ունի կարելիին չափ ամենաբարձր հասոյթը վերցնելու. իսկ այդ տեսակի արդիւնաբերու-թիւնները նրանք են, որոնք համեմատաբար տարածութիւնից աւելի մեծ չափով զուտ արդիւնք են տալիս և դրանց միջոցով է մի-այն հնարաւոր օրըստօրէ բարձրացող հողային հասոյթին գոհացում տալ։

Գերմանիայում գտնուող կարգի վարձա-կալածքերի հեկտարի*) թիւը տատանւում է 300-3000 մարկի մէջ **) ինքնըստինքեան հասկանալի է դառնում, որ տնտեսատարածու-թիւնը անգամ ամենափոքր տեսակի վարելա-հողերի վրայ անհնարող է օգտաւէտ լինել, քա-նի որ վերջինիս՝ հէնց միայն հողային հասոյ-թի դրամը հասնում է 9 մարկի. մի գումար որը երկնակի բարձր է, քան տնտեսատարածու-թիւնից ստացւող նոյնիսկ ամբողջ զուտ ար-դիւնքը, այնպէս էլ հացահատիկների մշակու-թիւնը արդիւնաւէտ կարող է լինել միջին հաշւով հեկտարը 400-500 մարկ արժեցող հո-ղերի վրայ, իսկ վաճառականական բոյսերը, որոնք ամեն մի հեկտարից տալիս են 160 մարկ և դեռ էլ աւելի բարձր զուտ ար-դիւնք,*) արդիւնաւէտ կերպով կարող են մշակւել ամենաթանկ հողերի վրայ.

Ուրեմն անտառները իրանց՝ հողային հասոյթ վճարելու ընդունակութեամբ մինչև անգամ աւելի ցածր են կանգնած քան ա-րօտները. իսկ դրանից հետևում է, որ մենք մասնաւոր տնտեսութիւնների շահերը նկա-տի առած, մեր երկրի ամենաարժան, ու-րիշ մշակումների համար անպէտք հողերը միայն կարող ենք յատկացնել անտառային կուլտուրային. Այս երևոյթը պէտք է բացա-տրել նրանով, որ նախ՝ անտառատնտեսութիւնը անընդհատ է ուժեղ տնտեսութեան, ինչ-պէս ուրիշ մշակութիւնների տեսակները ու երկ-րորդ որ և ամենագլխաւորն է՝ անտառային

*) Հեկտարը = 9/10 դեսեատինի.

**) von dir gvltz Hadbuch dir gesamten Landwirtschaft 1890 թ. էջ. 611. I-Bd.

*) Krafft Lehrbuch q. Lanqwwirtschaft Bd. IV. 1890. էջ. 196.

* W. Sombart. der Moderne Kapitalismus 1902 թ Bd. II. երես 46.

---

Կիրիլի տուալ պրծար Բալախանի ցնծարա-նում քշտար տանի քիկում, որ մեր տնա-ցուն քշտին կարթել տամ, տեսնում մին թեա-մրուզ թեապա շինած դիւքեանի բռայի (էտ էլ ասիմ, որ Բալախանի թեամրուզ դիւքեանին, հեռէ իրենեխուա, հանցա զատարխանու հայա-թում շինած զարափ-խանա ինի, հանց փիս ծխատուատ) մին քանի ճանիլ աղայ. ըրէւում ար, որ մաստերսկոյի մարթին, տաք տաք խոսումին. էնմին դրազին էլ մին քանի դիւ-քեանչի կանգնած, մեր զուռնաչուն աղան էլ ար ըռահանց մաչին. մին էրկու խասաղուլ էլ (հուքմիս մեխկը չինի, էտ խասաղուլնեն հանցին քոռ Աւխոխին տէնած ընին, չինեքի իրիսնէն էնքան կեարմուր ար, որ մեր զա-լին դեարդեար Գուզուսին իրեսը քեփաւ վախտը ըռահանց իրեսին քշտին լիւանըրգեա ծա) էտ դիւքեանչացան մինը մանեա. նշանց տուաւ դրի էտ ճանիլ աղէրքը, խասաղուլնեն էլ խարաշօ-խարաշօ ընելաւ, խմբրուզնեն տիւրէւր ին տամ.

Ուսեն խասէն վէնեա կախ տուէ էտ ճա-նիլ աղորցը քշտէն, որ տէսնամ հինչն խոսումն էտ զեարուկը մին էրգեան մաղէրաւ աղայ մուստացաւ մզանաւ, թա ըռանէգ ըռաւ թուք մեզ տէնեալ լաւ չի, ինձ էլ ասից՝ որ աղէր, տես-նումըմ տաւ էլ քո ըռաքչի, թա օզումըս տաւ էլ քինի թուշ հասպիտկու կաղաքման, եա գետա լու քմ ընդէզ հիկըցնիմ մէր էս պէնին տհվա-յաթը. Գէնն էլ էնար՝ որ էտ թեամիւզ թեա-զա դիւքանը էտ ճանիլնէրին խօսքեան ըռա-ւում ար, որ միթամ աղաքօչէրը իրանըրն լօխմին տեղ ընգնէր տեսալ՝ որ պէց անենի։

Ես ու էս կասիմ, դեարդի Թաթօս, էտ քռացած ընդունեներաւգ հին չըս լսալ. Եր, քինի տէս ըռանէդ չինչն ըսէլաւ.

Ըռնէզան սարըդ տալաւ յղէ իւէ ենէ հասալիեկու կաղաքման, տէսնամ իրեք հարիւ-րաւ խրիլ մարթա հաւաքւալ. մին կէս ահա-թաւ ետը էն երգեան մաղէրաւ. աղան եկաւ մարիփաթին լրիին էլ պարխղին աւից, ետեւան սկսից խօսէլը.

Ղօչաղը հանց լաւ խօսումար ըռաքօչուն ցաւան, դեարդեան, պիեանեան կարօս մեարքեան մարքարից ինի թափւում, էրկու անգամ էլ փոխ ի կալալ լում. տեսեմը մին խօսք էլ մինատ քցալ չըմ, մէկը թա որ էն խասաղուլ-նէրին խմբրուզան մինը տան քինում տէզը ինձ նի չի կեալ սաքիթ անի, եկող դիծնումը լոխ մին մին կիրել կասամ.

Սնած կաղէթիա

Նազդ փոզաւ տանող, միջնաբերդը հէտէ աղօթք տնող

Դեարդի Թեաթօս

Զանգզապարդութեան դեարդի Թաթօսի տօրաագրեալ եմ զարազլէղեցի

Սահակ

digitised by A.R.A.R.@

արդիւնաբերութեան արտադրութիւնների գինը դիւղատնտեսութեան միացած ճիւղերի արտադրութեան գների հետ համեմատ չափով չէ բարձրանում. Թէև ճիշտ է, որ գործարանային շինութիւնների բազմացմամբ, հեռագրաթելերի ու հեռախօսների ձողերի գործածութեամբ փայտեղէնի սպառման մի նոր աղբիւր է բացուած, որպիսին հին ժամանակներում գոյութիւն չունէր—բայց միւս կողմից էլ, ուրիշ ասպարէզներում սպառման շրջանները կրճատւում են։ Այժմ մենք չենք տեսնում քաղաքներում շինութիւնների համար գործադրուող հսկայական գերանները, տախտակներ, սանիքները, փայտեայ զարդարանքները—մետաղները այդ ասպարէզում արդէն իրանց արժանութեամբ և կայունութեամբ անփոխարինելի են դարձել։ Սակայն փայտեղէնի ամենախոշոր պրոցենտը գործադրւում էր և գործադրւում է իբրև վառելիք, իսկ այսօր մենք տեսնում ենք որ քարէ ու գետնածուխը, տորֆը, մազութը թէ իրանց յարմարութեամբ ու գնահատելի յատկութեամբ և թէ իրանց աժանութեամբ մրցում են փայտեղէնի հետ։ Առաջ բերենք մի պերճախօս ապացոյց. Գերմանիայում գործադրւում էր քարէ ածուխ*)

1853 թ. 9 միլիօն տոնն**)

1899 թ. 101 " "

Համարեա թէ նոյնանման չափով բարձրացել են և գետնածուխի, տորֆի ու մազութի գործադրութեան պահանջը. անգամ էլէկտրականութիւնը շատ երկրներում մուտք է գործել խոհանոցներ իբրև վառելիք և եթէ այսպէս շարունակուի, մարգարէութիւն չենք լինի արած եթէ ասենք որ փայտեղէնի գործածութեան վերացումը, իբրև վառելիքի, մի քանի տասնեակ տարիների խնդիր է։

Քաղաքակիրթ երկրներում, ուր ճանապարհների հաղորդակցութիւնը աժան է, ամենայետ ընկած վայրերում անգամ մենք կըհանդիպենք վերոյիշեալ վառելանիւթերին, իսկ այն երկրներում, ուր հաղորդակցութիւնը շատ թանկ է, անտառների տնտեսական նշանակութիւնն էլ սահմանափակ է։

Եւ այս բոլոր ամրակուռ փաստերից յետոյ անկարող ենք չեզրակացնել, որ որքան հողը թանգանում է, այնքան էլ անտառաբուծութիւնը, իբրև արդիւնաբերութիւն թոյլ եղանակի, աւելի ու աւելի անշահաւէտ է դառնում, իսկ որ հողի գները օր օրի վրայ հսկայական քայլերով բարձրանում են, այդ անկասկածելի է։

Այսպիսով անտառների համայնական նշանակութեան և մասնաւոր տնտեսութեան շահերը իրար հետ բաղխւում են։ Եւ իհարկէ, եթէ մեր անտառները սփռուած լինէին համայնական նշանակութիւն ունեցող տարածութիւնների վրայ կամ տափօրեա անտառահատերում, հասկանալի է, որ նրանց կրճատման մասին խօսք անգամ լինել չէր կարող. բայց ով որ, գէթ հարևանցիօրէն ծանօթ է մեր իրականութեան, նրա համար գաղտնիք չէ, որ նպատակայարմար վայրերում մարգային ձևերով այգեստանի մի կուլտուրա չէ ստեղծւած. ընդհակառակը յաճախ մենք պատահում ենք անտառների, որոնք զետեղւած են ամենաարգաւանդ հողերի վրայ և եթէ Զօմբարտի լեզւով արտայայտուելու լինենք, կապիտալից յղփացած կրեսոսների համար իբրև զւարճութեան ու որսի վայր են ծառայում։

Թէ որքան անտառներ են հարկաւոր մեր երկրին համայնական տեսակէտից նայած, այդ ցոյց կտայ մանրազնին ուսումնասիրութիւնը, իսկ առայժմ, իբրև մօտաւոր մաշտաբ կարող ենք վերցնել Եւրոպական երկրներից Շվէյցարիան, որը իւր աշխարհագրական դիրքով ու կլիմայով աւելի մօտ է մեր երկրին, թէև այնտեղ էլ անտառաբուծութիւնը ցանկալի բարձրութեան աստիճանի վրայ չէ կանգնած։

Մենք տեսանք, որ Շվէյցարիայում անտառները բռնում են երկրի ամբողջ տարածութեան 19,1% իսկ մեզ մօտ 21,2%, ուրեմն մեզ մօտ, երկրի ամբողջ տարածութեան 2,1%-ը աւելի է գործադրւում անտառաբուծութեան համար, որը հաւասար է 474 հազար դեսեատինի։

Կարող ենք և պէտք է անտառների այդ տարածութիւնը, մեր կարծիքով գէթ էլ աւելին,—զրկատենք փայտեղէնից ու տանք գիւղացիութեան ձեռքը, որով և նրա ունեցած հողի տարածութիւնը ընդարձակած կլինենք 0,1 դեսեատինով։

Բայց այն մի ծովում խնդրւում է ծըղատով ապացուել։

Ա մ մ օ ն.

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓԻՒՌՔԸ

V.

Անցեալ նամակում խօսեցինք ռկանեագրքերի մասին և մեր նամակի վերջում յայտնեցինք այն միտքը, որ այդ դոկումենտի մէջ ամենազօրեղ կերպով արտայայտուել է Դաշն. ղեկավարող շրջանների պալիտիկանութիւնը։

Այդ կարող է հաստատուած լինել միայն այն դէպքում, երբ մենք կարողանանք մօտաւոր կերպով ներկայացնել թէ ինչ է կատար-

**) տոնն հաւասար է 60 փութի

digitised by A.R.A.R.@

ւուած՝ այդ «կանոնագրքի» հիման վրայ հրաւիրուած 1) ընդհանուր ժողովում, 2) Դաշնակցութեան խորհրդում և 3) իր մէջ փեդերատիւ կապերով իրար հետ կապուած—ինքնավար շրջանների Ռայօնական ժողովներում։

Կարևոր է ներկայացնել այն ոգին, այն տենդէնցները, որոնք այդ երեք ինստանցիների որոշումների ճիշդ ըմբռնումից են բղխում և այդ ըմբռնողութիւնից հանել որոշ եզրակացութիւններ։

«Կանոնագիրքը» կարդացողը շատ քիչ կարող է վերլուծելով ոգին ու տենդէնցները ըմբռնել, կարևոր է զգալ և այդ զգացողութիւնը համադրել կանոնագրքի յօդուածների հետ... և այն ժամանակ՝ համարձակւում ենք մտածել՝, բոլոր—նոյն իսկ անկեղծ դաշնակցականները կհանգեն այն եզրակացութիւններին, որոնց մենք ենք հանգելու։

Իսկ տողերիս գրողը, թող թոյլ տրուի նրան յայտնել «կանոնագրքի» ամբողջ ոգին ու տենդէնցները ըմբռնել կարողացել է, որովհետև մասնակցութիւն է ունեցել մի քանի կուսակցաժողովներում, մօտիկ ծանօթութիւն է ունեցել կուսակցութեան բարձր խաւերի հետ, որոնց ոգին ու տենդէնցները զուգահեռաբար են գնում կանոնագրքի հետ։

Մենք անցեալ նամակում ենք յայտնել, որ Դաշն—եան կանոնագիրքը մի բանալի է, որ փականք է գնում Կովկասի սոցիալիստական գործունէութեան. մեր այդ ասածին այժմ աւելացնելու ենք նաև այն, որ այդ փականքները տրուած են ոչ անգիտակցաբար, ոչ էլ անհրաժեշտութիւնից դրդուած։

Բայց այստեղ մի փոքր շեղւում...

Շատերը կարող են պնդել, որ Դաշն-ը չունի ոչ մի պայքարկանութիւն, որ նրա պայքարկանութեան փաստերից մեր բերած մի շարքը՝ սոցիալիստական գրականութիւն տալը, Շտուտգարտ գնալը և այլն... որպէս փաստ չեն կարող ծառայել... Մենք, (որովհետև տեղն է այստեղ յիշատակել) պայքարկանութեան մի նշանաւոր էջը, կարող ենք յիշատակել։

Ինչպէս յայտնի է Դաշն. VI Ընդհ. ժողովը տեղի ունեցաւ Վիեննայում։ Նա կուսակցութեան վրայ (ըստ մեր ենթադրութեան) նստեց միջինում 12,000—15,000 ռուբլի...

Երևի շատ միամիտ մարդիկ կասեն, որ Դաշն-ը տարագիր էր, նրա կուսակցաժողովները ամենախիստ հալածանքի էին ենթարկւում, Ռուսաստանում շնորհիւ ոստիկանական-քաղաքական պայմանների անհնարին էր Ընդհ. ժողովը կայացնել և վերջապէս, որովհետև Վիեննան գուցէ կենդրոնավայր է (տարածութեան հեռու լինելու մասով) այդ «հսկայ»

կազմակերպութեան, որի իշխանութիւնը տարածւում է տասնեակ երկրների և իշխանութիւնների «հայկական մասսայի» վրայ և որի տեռրիտորիայի սահմաններում արևը երբէք մայր չի մտնում։

Միամիտ առարկութիւններ...

Նախ. դաշնակցական կուսակցաժողովները չէին հալածւում. փաստ կարող է լինել, հէնց այն, որ Ընդհ. ժողովից յետոյ, աւելի խիստ ոստիկանական պայմաններում, Կովկասեան մայրաքաղաքում տեղի էին ունենում այլ կուսակցաժողովներ, որտեղ յաճախ մասնակցում էին 2—3—4 անգամ աւելի պատգամաւորներ շատ անվտանգ ու կանոնաւոր կերպով, հետևապէս Ընդհ. ժողովը (իր 25—30 հոգով) ամենայն վստահութեամբ կարող էր Կովկասում տեղի ունենալ։

Երկրորդ. նա կարող էր և պէտք է Կովկասում տեղի ունենար, քանի որ բոլոր պատգամաւորները (չնչին բացառութեամբ) մինչև Ընդհ. ժողովը սկսելը գտնւում էին Կովկասում, իսկ գալ Կովկաս 1—1½ ամիս մնալ, ապա ճանապարհ ընկնել Արտասահման մեր կարծիքով որ և է միտք չունէր։

Փաստաները այլ տեղ պէտք է փնտրել։

Կարևոր է տարագիր ձևանալ և ս. ռ-ների կամ ս. դ-ների նման Արտասահմանեան հորիզոնների տակ կայան որոնել։

Կարևոր է, որ Արտասահմանեան լրագիրները նիւթ տուեն հայ «սոցիալիստական» կուսակցութեան «քօնգրէսի» մասին, իսկ այդ կը լինի, երբ նա արտասահմանում և այն էլ սոցիալ. կուսակցութեան դահլիճում տեղի ունենայ։

Կարևոր է լուրջ եւ մեծ երևալ. դրա համար պէտք էր կուսակցական հազարները ծախսել և 2—3 ամիս Վիեննայում երկար ու նշանակալից աշխատանք կատարել։

Չէ՞ որ Ռուսական իրականութեան բոլոր սոցիալիստական կուսակցաժողովները փախչում են Արտասահման...

Թէև նրանք ստիպուած են այդպէս անել, որովհետև բազմամարդ են ու հալածական։

Իսկ Դաշն. Ընդհ. ժողովը սակաւամարդ էր ու ոչ հալածական*)։

Սակայն պահանջ էր աշխարհին հաւատացնել Դաշն.—սոցիալիստական և յեղափոխական լինելը... և դրա համար կուսակցաժողովը պէտք է կայացնել согласно всѣмъ требованіямъ моды, по новому курсу.

Բայց այդ կարևոր էր ընտրողական քանիներով լի Կովկասից հեռու փախչել, որ թշնամիներն ու բարեկամ—քննադատները շատ նիւթ չունենան խօսելու և անտեղեակ լինեն թէ ինչ է կատարւում կուսակցութեան ներսում։

digitised by A.R.A.R.@

Այդ քաղաքականութիւնը, թերեւս, ունեցաւ իր ժամանակաւոր դրական հետեւանքը։

Այնուհետեւ հաստատեց, որ Դաշն-ը Հայկական Սոցիալիստական կուսակցութիւն է, իսկ բարեկամ ու թշնամի քննադատները շատ հետւից և շատ մակերեւոյթօրէն ծանօթացան Ընդհ. ժողովի արդիւնքների հետ։

Սակայն այդ բոլոր հետեւանքները—մենք համոզուած ենք անցած—միայն ժամանակաւոր են։

Անցնենք մեր նիւթին։

Դաշն-եան Ընդհ. ժողովները կուսակցութեան ամենաբարձր ինստանցն են։ Ներկայացնում, նրա կազմում են 1) կենտ. կոմիտեների, 2) շրջանային ժողովների, 3) բիւրոների, 4) խմբագրութեան, 5) ուսանողութեան, 6) պատասխանատու մարմինների ներկայացուցիչներից և 7) հրաւիրուած ընկերներից։

Եւ Ընդհ. ժողովը մօտաւորապէս ունենում է հետեւեալ պատկերը։

| | | |
|---|---|---|
| Բիւրոներից | 3 հոգի. | |
| Տաճկաստ. | 6—8 հոգի. | |
| Կովկասից. | 3—6 " | *) |
| Խմբագր. | 1 " | |
| Բուլղարիայ | 1 " | |
| Եգիպտոս | 1 " | |
| Պարսկաստան | 1—2 " | |
| Ամերիկայ | 1—2 " | |
| Պատ. Մարմին | 1—2—3 հոգի | |
| Ուսան. | 1—2 | |

Հրաւիրուող ընկերների թիւը անյայտ է... Դա կախուած է ժողովի ցանկութիւնից և պարագայութիւնից։

Մենք ենթադրական թւեր ենք բերում և նկատի ունենք անցեալի փորձերը։

Ժողովի էութիւնը պարզ կլինի, եթէ ի նկատի առնենք, որ այնտեղ ձայն ունեն և պատասխանատու են տեսակի անձինք, 1) որոնք կուսակցութեան թէօրիայի հետ շատ քիչ ծանօթութիւն ունեն. 2) կուսակցական կեանքից հեռու են ու պրակտիկային անծանօթ, 3) այս կամ այն մարմնի ազդեցութիւնն են կրում։

Պիտի ի նկատի առնել, որ Ամերիկայի, Եգիպտոսի, Բուլղարիայի պատգամաւորները քաղթական-ծառայասաւանդներ են, որոնց ամբողջ համակրանքներն ու ուշադրութիւնը կազմուած է Տաճկահայ դատի հետ։ Կուսակցական կեանքի համարեայ բոլոր խնդիրներում նրա Տաճկահայ ընկերների հետ են։

Իսկ ձմբեր են Տաճկահայաստանի պատգամաւորները։

Դրանք արիւնոտ երկրի իսկական զաւակներն են. խմբապետ—հայդուկներ՝ սահմանափակ կրթութեան տէր—նոյնչափ սահմանափակ հասկացողութիւններով։

Բիւրոների և խմբագրութեան ներկայացուցիչները Դաշն-եան իդէօլօգներն են՝ 90-ական թւականների «Արծրունեան» սոցիալիստները»։

Դրանց ազդեցութեան տակ են համարեայ միշտ Պարսկաստանի ներկայացուցիչը և շատ յաճախ Ուսանողութեան ներկայացուցիչը։

Կովկասը տալիս է «սոցիալիստ» պատգամաւորների մի փոքր գրուպպա։

Եւ այդ բոլորին անկլանում են հրաւիրուած ընկերները—խորհրդակցական կամ ձայնի իրաւունքով։

Ահա մօտաւորապէս կուսակցաժողովի պատկերը։

Եթէ փորձ անենք այդ կուսակցաժողովը թւերի բաժանել, այսինքն մի եւ անբաժան Դաշն-եան մէջ գոյութիւն ունեցող ուղղութիւնների ներկայացուցիչների քանակը որոշենք, դուրս կգայ հետեւեալ մօտաւոր, բայց հաւանական, պատկերը։

Հայ «սոց.-յեղ.»—Դաշնակցութեան կուսակցաժողովի մէջ մասնակցում են՝

| | | |
|---|---|---|
| «Սոցիալիստներ» | 7—10 | հոգի. |
| Նացիօնալ-յեղ. | 3—6 | » |
| Դրանց ազդեց. տակ գտնւողներ | 10—12 | » |
| Անկազմակերպ | 2—3 | » |
| Հայդուկներ | 3—5 | » |

Ահա այն կուսակցութեան ամենաբարձր մարմնի պատկերը, որ գնում է սօցիալիստական համագումար, «սոց. թերթ» է հրատարակում, «աշխատաւորական դատի» և «դասակարգային կռւի» պաշտպանն է։

Մեզ կհետաքրքրէր անշուշտ այդ կուսակցաժողովի պրոտոկոլները տպուած տեսնել, ինչպէս սովոր ենք տեսնել այլ կուսակցութիւններինը. մենք վստահ ենք, թւերը կարող կլինենք ոչ թէ մօտաւոր, այլ ճիշտ կերպով բերել, եթէ կարողանայինք եթէ ոչ տպուած, գոնէ ձեռագիր կարդալ Ընդհ. ժողովի ատենագրութիւնները—բայց այդ հնարաւոր չէ, որովհետև այդ ատենագրութիւնները շատ ճարպիկ կերպով ծածկւում է ոչ միայն հասարակ—Դաշն-երից, այլ և գործօն մարմիններից ու-

1) Մենք չենք ուզում ասել, որ Դաշն-ը չէր հաւատում դրական ինտերնացիոնալ կազմակերպութեան. ․․․ մենք միայն ի նկատի ունենք Ընդհ. ժողովին նախորդող կիսամեակը, երբ ․․․ և այլ խառնութիւնները համարեայ թէ չէին արտայայտւում։

*) Հաս նոր «բողոքած» Դաշն-ը Կովկասում ունի երեք կենտ. կոմիտէ, որից նորեր կարող են լինել 3—6 հոգի. Մանրամասները յետոյ։

digitised by A.R.A.R.@

«ընկերներից»*)։

Եվ մենք ինչ—որ տեսնում ենք ընդհ. ժողովի մասին քաղում ենք ռեզոլյուցիաներն այն ժողովածուից, որ մենք ստացել ենք ընդհ. ժողովներից անմիջապես յետոյ հրատարակել և կանոնադրից, որ հրապարակի վրայ է, այլ և իրական մի շարք գործերից որոնց մեջ մասնակցություն կամ ծանոթություն ունեցել ենք։

Ընդհ. ժողովը (ինչպես ասացինք) կուսակցական ամենաբարձր իշխանությունն է, Այդ խայտառակ հաստատությունն այս ու այն է կախված կուսակցության բախտը կուսակցության գործերն ու գործիչները։

Դաշն—ական մի լիդերի ցենտրալիստական պետության մասին ասածները հենց նույն կուսակցության վրայ կրկնելուց զուրս է գալիս որ ընդհ. ժողովից է բղխում և դեպի ընդհ. ժողովն է հոսում ամբողջ Դաշնակցությունը։

Եվ իսկապես բացի երազից ընդհ. ժողովը տալիս է կանոնադիրը, որոշում է այս ու այն շրջանների ու Դաշ—եան «կենտրոնի» բուջեները, ընտրում է անհատ ադյոնների բյուրոներ (օրին. Կովկասի բյուրոյի 5 անդամները—Տեր Մեր Նախկին Նամակը), ռեալական թերթի խմբագրություն, տալիս է երկրի ապստամբական ու ցուցական ձեռնարկների նախագծեր և այլն և այլն։

Այդ բոլորը—և շատ—շատ ուրիշ հարցեր, որոշում է «ժողովրդա—սոցիալիստներ», «Դաշնակ—սոցիալիստներ» և ս—ռ սոցիալիստներից (կամ նման ձևացողների) ընդհ. ժողովը։

Եփրատացողը Թիֆլիսի բյուրոյի, Ամերիկականը՝ Կովկասյան խմբագրության, զարդականը, Դաշ—թեան բյուջեի և Բուլղարականը՝ Սասնոյ ու Տարոնի պարտիզանական ձեռնարկների նախագծերին են քվե տալիս ընկերություններ կոլոնայում։

Ինչ ապամարտությամբ, ինչ իրաւունքով... մի երկրի մեջ, կուսակցության սրիկակոյի—Անդրկովկասյան ու անլուծելի հարցերու.

Միայն մի խոսք դէպի ցենտրալիզմ—մի արդարացում—մենք շատ տպավորվել ենք. պիտի մի քիչ կենտրոնանալ։

Եվ այդ պատրանքով, այդ պատճառաբանությամբ ընդհ. ժողովը մի և անփոփոխ Դաշն—եան խնկալեն որ ընդհանուր ցենտրալիզմ հրամանատարն է...

Ինչ էքսում [illegible] ժողովներին ու խորհրդին, կուսակցական ժողովների երկրորդ ու երրորդ [illegible]։

Մենք կըդառնանք այդ հարցին հետևեալ անգամ։

Շանթ

---

*) Երբեք չեմ մոռանալ. կենտ. կոմիտեներից մեկը մի քանի պիտակներից, որ կարծում է կուսակցության «Ծնունդ» ամսական լինելու համար ուժեղ այդ ամենապարտությունների պատմերը (այսպիսի՝ պարտեզ գետից անհրաժեշտի էր, այդ գործ էր) հեղինակ. Այդ կա գաղտնիքն այդ մասին խոսել. Այս տարբեր Թուրքական թողնված, երբ նույն այդ Կ. կոմիտեի երկու պատգամավորները մասնավոր խոսակցությամբ ասելին Արև. Բուլղարի անդամներից մեկին հետ և հարց էին տալիս, թե ինչու չի ուղղորդված ամենապարտությունների պատմերը զանց կեսա. կոմիտեներին վերջինս ամենայն ստորությամբ (թեև ուղղված էր հանդեպ նա տալ) պատասխանեց.—կցնով Օռ [illegible] ու այնպես երկար-դամ...

[illegible] կարող լեն։

---

# ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

---

## ՆԱՎԹԱՇԽԱՐՀ

### Բ Ա Լ Ա Խ Ա Ն Ի

Դեռ շատ օյիններ պիտի խաղան բանւորների գլխին հայ բուրժուաները, եթե բանւորությունը քնից չզարթնի։

Բաքվայ հայ բուրժուաները նացիոնալ ցեխ. և զանազան ազգային կուլտուրական ու բարեգործական հիմնարկությունների անունով, տասնյակ բանւորությամբ խաղացին։

Այժմ էլ բուրժուա պարոնները մի նոր միջոց են հնարել, հայ բանւորության գլխին խաղալու. Հայ բուրժուաները միաբերան պրոշել են որ մի բանւորի արձակելուց չպետք է սուսհետո ինչ էլ որ լինի, թեկուզ մի հինգ օրով Այսպիսի հանգամանքներում իշխանից կոպտուծն խնամողական կարգեր ունեցողները, բայց հարցը միաձայնությամբն է վերաբերում։

Օրինակ, ամեն մի բանւոր պէտք է գրելի իրա պաշտոնից, եթե Ա-ծ մի արտացէ մի որևիցէ զորախտությամբ կամ փորձանք պատահի՝ թեկուզ հենց մեկին ու մեկի մասնաճյուղներից մեկնելով և այլն։

Հայ բուրժուան մի նոր միջոց է գտել հայ բանւորներին շահագործելու. Եթե մեկին ու մեկը հարցնի, հայ հարուստին, կամ նրանց պաշտպանող ներկայացուցիչներին թէ ինչու են նրանք այդպես վարւում, նրանք առանց կարմրելու այսպես կպատասխանեն, որ «մենք նրա համար ենք այդպես անում, որ հայ գիւղերը քայքայւում են, բոլորը գալիս են այստեղ առանց սեղ թողած և, մի քանի

digitised by A.R.A.R.@

տարուց յետոյ դուք կտեսնէք, որ գիւղում մարդ չի մնացել, որ հայի օջախի ծուխը մարել է, հայի օջախը վաղուց չկայ հէնց նորա համար որպէս զի հայաբնակ գիւղերը չքայքայուէին, որ միշտ հայի օջախը վառ մնայ, հայ հարուստները իրենց կառավարիչների հետ ամօթ ու ցաւ զգալով, այդպիսի միջոց են գտել, որ հայ գիւղացին իրա տունը չթողնի և չգայ, այստեղ նաւթահանքերը թէկուզ հէնց քաղցից էլ մեռնելիս լինի... միայն թէ չգայ։ Տեսնում էք ընթերցող ուրեմն եթէ հայ գիւղացին գիւղից չգայ այստեղ աշխատելու, դա լաւ կլինի, բախտաւորութիւն է հայերի համար թէ չէ ուրիշ ելք չկայ ըստ մեր ազգ. բուրժուաների։ Ուրեմն ամեն մի հայի լաւ ապրելու համար հարկաւոր է, որ նա չգայ Բագու, թէկուզ ինչ էլ որ լինի։ Հայ ժողովրդի լաւ ապրելու համար այս միջոցն են գտել հայ հարուստները։

Իսկ գիւղացին վարելահող ունի, հողերը արդիւնաւոր դարձնելու միջոցներ չունի կամ վերջապէս լծկան եզ, գոմէշ, ձի, այս բոլորից զուրկ է հայ գիւղացին թէ չէ, այդ մասին և ոչ մի խօսք մեր ազգայինների կողմից... Դեռ մի կողմ թողած կրթական պայմանները, որ տասից մէկը իր մայրենի լեզուն կարդալ գրել չգիտէ, այս պայմաններից իհարկէ հետ չեն մնալ և հայ կալուածատէրները, բէկերն ու վաշխառուները։

Քանի որ հայ բանւորութիւնը դեռ անգէտ է քանի դեռ նա չէ հասկացել իրա ով լինելը իբրև շահագործուող դասակարգ, քանի որ նա չէ հասկացել, որ իրա փրկութիւնը իրանով պէտք է լինի և ոչ թէ ինչ որ ազգայինների ձեռքով, վերջապէս քանի որ հայը չէ մոռացել «սուրբ էջմիածին» նայիրեան ազգ. նրա մտածմունքը, նա միշտ կշահագործուի։

Նոյնպէս և հարուստները, նրանք այնքան քաջութիւն չունեն որ անկեղծօրէն, առանց կարմրելու, փոխանակ միամիտ բանւորին հայրենի գիւղով կամ օջախով կերակրելու, յայտարարէին, որ իրենց համար հաճելի չէ այսպէս, որ իրենց հարկաւոր է մշտական աշխատող գործին ծանօթ բանւոր և ոչ թէ հայ բանւորների նման, որ մի քանի ամիս աշխատեն, գնան գործը մոռանան ու նորից գան։

Չէ որ եթէ տարաշխէկը, մեքենայ իւղողը, վերջապէս ամեն մի կառա-գործիայի կամ ցեխի բանւորը եթէ մի քանի տարով չհեռանայ գործից միշտ աշխատէ միայն տեղը՝ նա գործին լաւ կծանօթանայ։ Չէ որ կապիտալիստի համար լաւ չէ որ ամեն ամիս բանւորներ փոխուեն․ գործին վնաս է, հարկաւոր է, որ ամեն մի բանւոր լաւ ծանօթացած լինի իրայ կատարելիք գործին, և ամեն մի բանւոր զրկելով արձակուրդից յաճախ չի կարող հաշիւ մինչրնելու գործից հեռանալ, այլ ստիպուած կլինի երկար ծառայել, կամ թէ չէ բոլորովին կթողնի գիւղը և կը կապուի գործի հետ։ Իսկ մի բանւոր, որքան երկար մնա մի որևէ գործում, այն ժամանակ պարզ է, լաւ կծանօթի գործի հետ կլինի գործին հմուտ բանւոր, գիւղից զրկուած իսկական պրօլետար որին ապառում և ձգտում են մեր հարուստները, թէև այդ նըպաստած կլինէր և բանւորական միութեանը, որովհետև իսկական պրօլետար լինելով բանւորները աւելի լաւ կը կազմակերպուէին քան թէ հիմայ։

Բայց ո՞վ է մեղաւոր այս բոլորի համար... Քանի որ հայ բանւորութիւնը դեռ կուրօրէն հետևում է ազգային կուսակցութիւններին։ Մինչև որ հայ բանւորութիւնը յետ չսովորի «Դրօշակից» «Մշակից» ու «Զանգից» ազգ-սոցիալիստական թերթեր կարդալու, մինչև որ նրանք չմոռանան հայոց երևակայական գաւառ-մասին խօսելուց. Նրանք միշտ ճնշուած կլինեն։ Եւ այս բոլորի առաջ աւելի մեղաւոր են այն մարդիկ, որոնք իրենց խաւարութեան կամ նախապաշարուած անհիմն համոզմունքներից, զրկուած հայ բանւորութեան տանում են դէպի կորուստ։

Բուգոլֆ

Ք Ա Ղ Ա Ք

«ԱՆԻ»-ի գրադարանի № 2-ը Ռի-խարդ «Սոցիալիստական պրօբլեմներ» գիրքը ցենզուրային կոմիտէի կարգադրութեամբ ենթարկւել է գրաւման։

## ԲԱՆՒՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

### I.

Վերջին ժամանակներս խօզէյինների կողմից սկսած անզգամ ու յանդուգն հալածանքը ու խստութիւնները բանւորութեան դէմ բոլորին յայտնի են։ Օգտուելով «Նպաստաւոր» պայմանից ռէակցիայից նրանք այժմ ամեն ջանք գործ են դնում հետ առնելու այն բոլոր չնչին բարւոքութիւնները, որոնք բազմաչարչար բանւորութիւնը ձեռք է բերել երկարատև ու ծանր կռւում...

Երեկւայ «ազատամիտ», «յեղափոխական» բուրժուազիան, որ բոլորի ճնշման տակ վրան էր քաշել այդ դիմակները, այսօր այլևս իրան ազատ զգալով, աւելորդ է համարում ծածկել դիմակների տակ, և երևան գալով իր շահագործողի մշտական դերում,

digitised by A.R.A.R.@

կրկնակի թափով սկսել է իր անլուր շահատակութիւնները և կեղեքումները... Բնորոշ նկատել, որ «այնն» օրերին օրէնքի անունից ճառող և նրա պոչից բռնող բուրժուազիան, այժմ ինքն է, որ տարւելով անկուշտ շահասիրութեամբ, սկսել է այդ իսկ օրէնքին դէմ գնալ, նրան խախտել... Այդ հաստատող օրինակներ շատ կան. ես միայն կը յիշեմ հիւրանոցատէրերին և ճաշարանատէրին, որոնք վարակւելով այլ ձեռնարկութիւններում սկսած հակաբանւորական արշաւանքից և խրախուսւելով նրանց մասնակի յաջողութեամբ, իրանք ևս սկսել են «զարթնել» և ամեն ջանք գործ են դնում, որպէսզի դարձեան 1905 թւից առաջները, երբ բանւորութիւնը ի «վիճակս» և ի «խաղաղութիւնս» բուրժուաների զրկւած էր մարդկային տարրական իրաւունքներից և օր ու գիշեր քրտինք թափելով, միայն «սեփռոջն» անյագ գրպանն էր լցնում...

Հիւրանոցատէրերի, ճաշարանատէրերի և նրանց ծառաների մէջ այժմ գոյութիւն ունի պայմանագիր, որը մշակւել է ձեռնարկողների (խօզէյինների) և գործադուլային կոմիտէի կողմերից ընտրւած կոմիսիայի ձեռքով և հաստատւել կառավարութիւնից և կեանքի մէջ է մտել 1906 թւից:

Այդ կանոնները, որ կազմւել են հէնց իրանց խօզէյինների առաջարկութեամբ, այն ժամանակ, ըստ երևոյթին, իսկ այժմ երբ մի առանձին դժւարութիւն չկայ դորանց խախտելու մէջ, ամեն կերպ աշխատում են ի չիք դարձնել այդ կանոնները: Աւելորդ է այստեղ կանգ առնել այն զզւելի ու անխղճելի միջոցների մասին, որոնց բուրժուաները միշտ սովոր են դիմելու նման դէպքերում... Բայց չենք կարող մեր զայրոյթը չյայտնել և միևնոյն ժամանակ զգուշացնել այդ պարոններին այն «միջոցի» նկատմամբ, որին վերջերս դորանք (օրինակ «(Գրանդ—Օտէլ», «Էրօնս») սկսել են դիմել: Այդ այն է, որ զրկում և զինում են միմեանց դէմ տեղիս վրացի և հայ ծառայողներին, ազգային թշնամանք սերմելով, նրանց մէջ պառակտումն առաջացնելու համար...

Դիմում ենք այդ պրօֆէսիայի բոլոր ազգերի ծառայողներին և հրաւիրում զգոյշ լինել, և չտարւել խօզէյինների կեղծ - ու խաբուսիկ խոստումներով ու սուտ շողոքորթելով միացած ուժերով դէմ կենալ նրանց բոլոր ոտնձգութիւններին և՝ նոր դաւերին:

Թադ. Տէրունի

# ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

—

ԳԵՐՄԱՆԻԱ.

Համմ (Վեստֆալի) 30 Նոյեմբերին Բադրոդ քարածխի երկու հանքերում գիշերը կուտակւած գազից առաջացաւ պայթիւն: Ածխահանքերի մէջ աշխատող 360 բանւորներից, մինչև հիմա հանւած են 38 հոգի, որոնցից մեծամասնութիւնը ծանր վէրքեր են ստացել, 3-ը սպանւել են: Հանքերից մէկում կորւած են դրսից 150 բանւոր, որոնք կորած են համարւում: Հարևան ածխահանքերից ուղարկւած են օգնող խմբեր:

Մինչև կէսօր 27 դիակ է հանւած:

Ազատելու աշխատանքները անհնարին են համարւում: Հանքերը ենթադրւում է լցնել ջրով:

200-ից աւելի լեռնագործներով բանւորներ համարւում են մեռած:

(Совр. Сл.)

Գերմանական ածխարդիւնաբերական բանւորութեան ցոյցը: Բադրոդ ածխահանքի 300 բանւորների մահը մեծ շարժում է առաջացրել գերմանական ածխարդիւնաբերող բանւորների մէջ: Բոխումում, որ ածխարդիւնաբերական կենտրոնն է, բանւորները բազմամարդ ժողով են գումարել, որտեղ հաւաքւել են 7,000-ից աւելի մարդ:

Այդ ժողովում որպէս զեկուցանող դուրս է եկել պատգամաւոր Հիւէն:

Ժողովը շատ վրդովւած բնաւորութիւն էր կրում: Բանւորները որոշեցին, ինչ գնով էլ լինի, հասնել աւելի լուրջ և ուշադիր աշխատանքի պահպանման, առանց որի նրանք անկարող են շարունակել իրենց աշխատանքները:

Ի նկատի առնելին մի շարք գործնական միջոցներ:

(Совр. Сл.)

◆ Կատարւածի համար ցաւակցութիւն յայտնելու համար Համմ է եկել Վիլհելմ կայսերի 2-րդ որդի պրինց Էյդել-Ֆրիդրիխը: Նրան հանդիպեց բազմամարդ ամբոխը, որ վրդովւած գոչում էր. «պատասխանատւութիւն բանւորներին... պետական օրէնք հանքերում աշխատողների համար... բանւոր վերահսկիչներ...»

Ամբոխը իրա միջից ընտրեց 3 բանւորների, պրինցի հետ բանակցութեան մէջ մտնելու համար:

Սակայն պաշտօնեաները աշխատում էին խանգարել բանւորների տեսակցութիւնը պրինցի հետ, սակայն ընտրւածները շատ վճռական էին և հասան իրենց ուզածին:

digitised by A.R.A.R.@

Շփոթւած պրինցը հարցրեց, թէ ինչ են կամենում նրանք։

—Թոյլ տուր ինձ, ձերդ մեծութիւն, ասել,—պատասխանեց՝ բանւորը՝ Ֆիլլիբերը, որ ժողովուրդը մեզ ուղարկել է հարցնելու, թէ ձերդ մեծութիւնը ինչ է մտադիր անելու ամբոխը հանգստացնելու համար։

Պրինցը չկարողացաւ առաջին անգամից պատասխան տալ նրան։

Այն ժամանակ Ֆիլլիբերը կրկնեց և բացատրեց նրան ամբոխի բղաւոցները։

— Անհրաժեշտ է,—ասաց Ֆիլլիբերը—մի պետական օրէնսդրութիւն, որը պահպանի անխտրաբար բանւորների կեանքն ու առողջութիւնը։ Անհրաժեշտ է, որ մշակւած բոլոր կանոնների վրայ հսկեն ընտրւած բանւոր վերահսկիչներ բոլոր հանքերում։

Ի պատասխան այդ ամենի, պրինց Էյդել-Ֆրիդրիխը, արտայայտելով իրա խորին ցաւակցութիւնը ծանր դժբախտութեան առթիւ, խոստացաւ բանւորների ցանկութեան մասին յայտնել հօրը։

— Ես յուսով եմ—աւելացրեց նա—որ ձեր ցանկութիւնները կկատարւեն։

Սեղմելով բանւոր — պատգամաւորների ձեռքը առանձին առանձին, պրինցը հեռացաւ։

Ասում են, որ նա այնքան յուզւած է եղել, որ Համմից վերադառնալը յետաձգել է մի քանի ժամով։ Լաւ է այս ամենը, միայն թէ պրինցը շուտով չմոռանար այդ վրդովմունքը… (Сп.)

Դեռ չեն չքացել—մօտիկ անցեալի վառ յիշողութիւնները. կենդանի է շատերի սրտում երեկւայ հարիւրաւոր անմեղ զոհերի եղեռնական մահւան տխուր յիշատակը։) Արեան յետքերը դեռ չեն չքացել. Ռեկօվեան հանքերի սոսկալի աղէտը, հողակոյտի տակ դեռ միայնակ թարմ շիրիմները և նրանց յոյսով ապրող մարդ—արարածները, դեռ սպասում են իրենց չար բախտի վերջնական լուծման. սակայն ահա նոր աղէտը գալիս է հինը պատմութեան գիրկը նետելու. նորից վերականգնելով նոյն պահանջները, նոր միջավայրում։

Նորից ազատիչ խմբեր, նորից անյաջող աշխատանքներ, նորից ցաւակցութիւններ և նորից սրտառուչ, յուզւած տեսարաններ…

Եւ անշուշտ նորից հարցապնդումներ, արձանագրութիւն, նպաստներ, պահանջներ…

Մինչև երբ այս ամենը։ Մինչև որ կառաջանան նոր նոր աղէտներ, նորից կլսեն օգնութեան աղաղակներ, և… հին աղէտը՝ կմոռացւի…

Զ.

◆ Գերմանիայի ընկերակցական շարժումը երկու մեծ կորուստ ունեցաւ։ Օգոստոսի 18-ին 58 տարեկան հասակում մեռաւ Բրէմէնում Իօհան Նայերը, որն անդամ էր Գերմանական ընկերակցութիւնների կենտրոնական յանձնաժողովի։

Հոկտեմբերի 8 մեռաւ Բերլինում Ֆրանց Տուցաուէրը, Բերլինի սպառողական ընկերակցութեան գանձապահը, որը մասնակցում էր նոյնպէս և քաղաքական բանւորական շարժման և 1890—1906 Գերմանական Րայխստագի պատգամաւոր էր։

Լայպցիգի Պլագւից արւարձանի սպառողական ընկերակցութիւնը 1907-ին ունեցել է 8000000 ռ. շրջանառութիւն, այսինքն 900 հազար ռուբլով աւելի քան 1906-ին։ Զուտ արդիւնք ստացել է 730000 ռ.։

Ֆինական ընկերակցական շարժումը ունեցել է այս տարւայ ապրիլի 1-ին 280 ընկերակցութիւններ. 6 միլիոն ռ. շրջանառութեամբ և 200000 ռ. զուտ եկամուտով։

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՎԱՐԱՆԴԱ 14 նոյեմբերի

Հետաքրքիր դէպքերի ու անցքերի վայր է Վարանդան։ Ամէն ոք, ով ուզում է որ և է գործ անել, ամենից առաջ իր փորձը կատարում է վարանդացիների վրայ։

Ուշադրութեան արժանի է կուլտուրական միութեան գործ դրած «հեկայական» եռանդը այդ ուղղութեամբ։ Ոչ միայն ուշադրութեան, այլ և գովասանքի…

Եւ ինչպէ՞ս չարժանացնել ուշադրութեան, երբ մարդիկ անհգային եռանդով գործի են կպել և մի տեղ հիւանդանոց են բաց անում, մի ուրիշ տեղ խնայողական—գիւղական բանկեր, մի այլ տեղ դպրոց, շտեմարան և այլն։

Հեռւից դիտողի և մանաւանդ կուլտուրական միութեան բարեկամների «Զանգի» միամիտ ընթերցողների համար այդ յայտարարութիւնները այնպիսի պերճախօս փաստաթղթեր են, որոնցով խիկարուէս կարելի է ոգևորւել և ովսաննաներ կանչել մինչև իսկ։ Սակայն գործին մօտիկից ծանօթ մարդկանց համար ծիծաղելի և մինչև իսկ ողորմելի են կուլտուրականն էլ, Զանգն էլ, նրանց բաց արած դպրոց ու հիւանդանոցներն էլ, շտեմարաններն ու բանկերն էլ։

Դիմենք փաստերին։

Վարանդայի Նոր—Շէնում բացւած հիւանդանոցը, որի նախկարին՝ անծանօթ կերպով

digitised by A.R.A.R.@

կուլտուրական միութիւնը իր անունն է դրոշմել, բնաւ նրա միջոցներով չէ սահղմւած այլ մի խումբ մտաւոր մարդկանց։

Այդ հիւանդանոցը, որի գոյութեան, աղանդովութեան փառքը այնքան ցնծիկ կերպով պատմում էր կուլտ. միութիւնը իր օրգանում, այսօր փակւելու վրա է հենց նոյն այդ կուլտ միութ. հրամանով, որովհետև նախաձեռնողներին խոստացած նպաստները պ. պ. քուրմուանները հրաժարւում են տալուց, իսկ կուլտուրականը որ միայն անուանական կապ ունի նրա հետ—գլուխ է կրճատել հիւանդանոցի ծախքերը որովհետև միջոցներ չկան։ Անշանակէ, եթէ այժմ, որ դեռ ոչ մի հիւանդի չեն ընդունել և պարկեցրել հիւանդանոցում, որ երապէս ոչ մի հիւանդ բժշկական կանոնաւոր օգնութիւն չի ստացել դեռ, չնայելով որ 10 մահճակալ պիտի ունենար նա հիւանդներով հանգիրձ, որոնք դեռ ոչ մի կոպէկ ծախք չեն նստել հիւանդանոցին, բայց որոնք հսկողական ծախսերի տակ պիտի ձգէին նրան և որի համար դեռ ոչ մի կոպէկ չի ծախսել հիւանդանոցը բոլորովին իրաւունք չի ունեցել այդպիսի խարուսիկ յայտարարութիւններ անել և թող փչել ժողովրդի աչքին եթէ ամբուլատորնի հիւանդներին դիտելու և pulves doveria տալու համար միջոցներ չկան և առաջարկւում են կըրճատել ծախքերը, ապա ինչ միջոցներով նա կարող է 10 հիւանդի խնամել ու կերակրել։ Այս հանգամանքը մեզ լիովատար իրաւունք է տալիս ենթադրելու, որ այդ հրամանին կհետևի մի ուրիշը— լիկվիդացիայի հրամանը։ Մենք համոզւած ենք դրանում։

Նոր—Շէնում դպրոց է բաց արել նոյն միութիւնը։ Ուսուցիչ է հրաւիրւած նկրտսանանաւարտ մի երիտասարդ։ Ազբելու բնակարան չէ գտնել, Շէնցարական գիւղի նման Նոր—Շէնում, մասցրել—Թոքերի բարբրգում է ստացել, դպրոցը փակ է. երեխաները փողոցում, կուլտուրականը մատ—մատի չի խփում նոր ուսուցիչ հրաւիրելու և հիւանդին նպարաւորութիւն տալու որ վերադառնայ հայրենիքը։ Նա հիւանդ պառկած է մանկավարժուհու օժնեակում և երեք ամիս է մի կոպէկ ռոճիկ չէ ստացել, չնայելով, որ միջև անցած բժիշկ պ. Միք. Մանդինեանը անձամբ դիմել, միջնորդել է այդ մասին։

Պատասխան չկայ։ Խեղճ երիտասարդը չոր է գնում...

Նոյն դրութեան մէջ են գտնւում նաև նրա բացարած միւս բոլոր դպրոցները։

Բանկեր բացանելու համար—100—150 ր. չող—չող ռոճիկներով հաստատիր գործակալներ են եկել Ամսուայ 21 որը քաղաքում Խանքենդում, «Թթուջրում» ապէս—ախոյեբումն քէփ անելով են անցկացնում, իսկ Թացած օրերը օրիորդների բրէջան խմբերի հետ Ամարասի և Խոնաշէնի հովիտներում։

Մի երկու գիւղում քէփերից ազատ մնացած օրերը, նրանք մարդիկ են ընտրել իրենց թէ բանկեր հիմնելու համար. բայց դրանով էլ վերջացել է նրանց գործը։

Երբեմն իրեն յեղափոխական անուանող տուրիկոր, այսօր՝ տանից խռնի խայթող գզալու, աչկառաքայ կերպով շահագործւում է կուլտուրականի—խեղճ ժողովրդի ոսկորներից քամած կոպէկները, շնորհիւ նրան, որ վերջապրաւոր պրովոկացիա ունի։

Դրանք են գիւղերում կուլտուրականի առաւածացրած, ինտելիգէնցիայի կատարած գործերը, որոնցով ուզում են «յարութիւն» տալ խաւարի ու տգիտութեան ճանկերում խեղդւող գիւղացիութեանը։

Դրանք են այն «գիւղական ուսումնարանները. բանկերը, գրատարանները, շտեմարանները, դեղատները, եւ մի շարք կուլտուրական հաստատութիւնները, որոնց վրայ դարձրել է պարոն Խատիսեանի երևակայական «ինտելիգենցիան» իր ամանձին ուշադրութիւնը և այդ մի «միքթարական փառք է»։

Պարոններ, հայ գիւղացին ձեր կոպիտ ծաղրի ու ծանակի առարկան չէ, հանգիստ թողեցէք նրան իր ցաւերով. նա է տանջել իր համար այդ թշւառ դրութիւնը, նա ինքն էլ կազատւի նրանից։

Խնամակալ ձեռքերի, անկոչ պաշտպաններին կարիք չունի նա։

Ազատեցէք նրան ձեր անհատական և խմբակցական շահատակութիւններից ու մաֆիական սխրագործութիւններից։

Ա.

## ԿԱՆԴԻՏԵՐ ԲԱՆՒՈՐՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Թիֆլիս 10 Նոյեմբերի

Թէ ինչ վիճակի է ենթարկւած յանգիս բանւորութիւնը և մասնաւորապէս կանդիտօր բանւորները, այդ կարելի է երևակայել բանւորական դասին նւիրւած թերթերի տւած տեղեկութիւններից, որոնք այնքան հարուստ են և փաստալի, որ ոչ մի անհատ չի կարող հերքել։

Նեփորի՝, որպէս բանւորական մի թերթի, որպէս նրանց քաղաքական անտեսական. իրաւնքերի պաշտպանողի և որ գլխաւորն է այդ բանւորութեան տան ուսողի, ընթերցողի համար, կարծեմ հետաքրքիր կը լինի մի քանի

digitised by A.R.A.R.@

փաստալից տեղեկութիւններ կանդիտեր բանւորների կեանքից, որով քիչ թէ շատ պարզուած կլինի նրանց դրութիւնը և, հաւաստացած եմ, կը տամ գրական հետեւանքներ։

Բայց նախ քան բանւորների դրութիւնը պարզելը, արժէ տալ նրանց վիճակագրութիւնը հեղափոխութեան շարժման օրերից մինչև 1906 թիւը և ռէակցիայի սկսելուց մինչև այս մայլ օրերը։

Առհասարակ Թիֆլիսում չկայ մի այնպիսի կանդիտեր արհեստանոց, որտեղ աշխատելիս լինի բանւորների այնպիսի ստուար մասսա, ինչպիսին մենք տեսնում ենք ռուսական Մայրաքաղաքներում։ Թիֆլիսի ամենամեծ արհեստանոցներում աշխատում են ոչ աւել 20—30 բանւոր, այն էլ հազուագիւտ դէպքերում։

Հետեւեալ կերպով է դասաւորուած եղել արհեստանոցներում բանւորութիւնը երկու տարի առաջ և այժմ՝

| Արհեստանոցներ | 1901—1906թ. | 1906—1908-ի |
|---|---|---|
| Լամի | 30 | 21 |
| Մէնաէ | 30 | 22 |
| Սահակեանց | 31 | 20 |
| Սօլակով | 25 | 16 |
| «Ֆրանցիա» | 20 | 12 |
| «Դավերեաս» | 20 | 10 |
| Ալիխանով | 20 | 12 |
| Իւզբաշև | 20 | 10 |
| Գէօրգով | 18 | 9 |
| Դարախվելիձէ | 18 | 8 |
| Անիև | 17 | 10 |
| Գէնէի Սաշա | 15 | 10 |
| Գէնէի Վասիլ | 13 | 8 |
| Նաումենկօ | 13 | 8 |
| «Պարվել» | 13 | 7 |
| Սազանելօ | 15 | 10 |
| Տօնապետեանց | 11 | 6 |
| Միքայէլեանց | 11 | 6 |
| Օնիև | 9 | 6 |
| Սարգսեանց | 9 | 5 |
| Լօմիձէ | 8 | 6 |
| Կօնօն | 7 | 4 |
| «Վիլա» | 5 | 4 |
| Սամուէլեանց | 4 | 4 |
| Օնանև | 4 | 3 |
| | եղել է 386 հոգի | 238 այժմ |

Տեսնում էք ինչպէս է կրճատւել բանւորների թիւը երկու տարւայ ընթացքում, 386 բանւորից միմիայն 238 հոգի*) այն էլ շատ չնչին վարձատրութեամբ։

Ինչ էր պատճառը, որ այդքան բանւորներին փողոց էին շպրտում առանց երկար ու բարակ մտածելու, և ինչ պատճառաբանութիւններ էին բերում պ. պ. շահագործողները։

Մի քան որ բոլորի համար պէտք է պարզ լինի (մանաւորապէս կանդիտեր բանւորների համար) այն է, որ Մայրաքաղաքներում, որտեղ արհեստանոցներում աշխատում են մի քանի հարիւր բանւորներ, աշխատանքի լայն բաժանումով և որ գլխաւորն է՝ մեքենաները կատարելագործուած են. հասկանալի է, որ այդտեղից արտադրած ապրանքներն անհամեմատ աժան կլինեն, քան թէ մեր Թիֆլիսի բանւորների արտադրած ապրանքները, որոնք դեռ այժմ էլ աշխատանքը կատարում են նահապետական գործիքներով, Էլ չեմ ասում այն, որ մի բանւոր պարտաւոր է խմորը հունցել, ապա կոնֆետ անել, տանել թոնրի մօտ և յետոյ թոնրի մէջ թխել և այլն։

Փոխանակ մեր պ. պ. խոզէյինները իրանց արհեստանոցների մէջ նոր, կատարելագործուած մեքենաներ և դրա հետ աշխատանքի բաժանում մտցնելու, որով միայն հնարաւորութիւն կունենային մրցելու Մայրաքաղաքների կոնդիտորանոցների հետ, և ապրանքները աժան վաճառելու, նրանք կրճատեցին բանւորների թիւը պատճառաբանելով որ, «գործ չկայ», ապրանքները «խոդի չեն գնում» և այդպիսի անմիտ շարլատանական, չմտածուած բաներ, որոնք միմիայն յատուկ են ազէտ բուրժուազիային և ոչ իր շահերը «գիտակցող» խոզէյիններին։ Հօ, իրանց խոզէյինների ընտանիքները չեն, որ քաղցից մեռնում են, կամ իրանց տամերը չեն, որոնք զրկւել են տարիներ ի վեր քաղցրեղէն ապրանքներ ճաշակելուց, որի պատճառով և այժմ ամէն մէկ խոզէյին հաստատակամ է դարձել, նրանք դրա մասին խօսելիս ժպտում են...

Բայց հետաքրքիր է իմանալ, ինչ էին մտածում «բանւորների շահերը պաշտպանող կուսակցութիւնները» և ինչ իրանք բանւորները։

Կուսակցութիւնները այդ ժամանակները զբաղուած էին բանակռիւներով, ընտրութիւններով, (որը պետական դումա պատգամաւոր ուղարկելու համար, որը կաթողիկոսական ընտրութիւնների պատրաստութիւնը տեսնելու, կամ Շտուտգարտի համար ստատիստիկայ հաւաքելու համար) Այդ իսկ պատճառով չէին կարողացել այդ չարիքի առաջն առնել, կամ տալ որ և է ցուցմունքներ, որպէս զի իրանց նախկին «բարգաւաճ» որով ամէն ժամանակ միրում էին յոխորտալ, բանաւոր թէ գրաւոր, թէ այս միութեան մէջ այսքան բանւորներ ունենք և այլն և այլն։

Իսկ իրանք բանւորները զուրկ լինելով դասակարգային տարրական հասկացողութիւնից, չկարողացան հասկանալ թէ հարկաւոր է

---

*) Այստեղ չէ մտցրած այն գործարանների բանւորների քանակը, որոնց տէրերը միանգամայն արհեստանոցը փակել են.

digitised by A.R.A.R.@

այդպիսի չարիքների դէմ կռւել միահամուռ կազմակերպւած և գիտակցական ոյժով։

Կանդիտեր բանւորները բաժանւած էին մի քանի մասի, որը սոց.-դէմոկրատների և էս-էրների ձեռքով կազմակերպւած անկուսակցական արհեստակցական միութիւնների մէջ, որը նացիօնալ-դէմոկրատ ազգային կուսակցական միութեան մէջ։ Մի խոշոր մասն էլ չէր մասնակցում ոչ մի կազմակերպութիւնների և միութիւնների մէջ պատճառաբանելով, որ իրանք ապահովւած են օր. Լոսի և Սօլովեվինը, որոնք վերջը փոշմանեցին։*)

Ահա այդ է պատճառը, որ այդքան բանւորները դուրս վռնդւեցին՝ առանց որ և է բաւարարութեան և դրանք այժմ Թափառում են քաղաքից քաղաք իրանց ընտանիքներով։

Իսկ ինչ է մնում մնացած բանւորներին անել, որպէս զի ապագայում չենթարկւեն նոյն վիճակին, որին ենթարկւեցին մօտաւորապէս 150 բանւոր ընկերները եթէ ոչ աւելին, երկու տարւայ ընթացքում իրանց աչքների առաջ։

Նախ. և առաջ կազմակերպւել առանց կուսակցական դաւանանքի, կրօնի, սեռի խտրութեան. անկուսակցական արհեստակցական միութիւնների և հիմնարկութիւնների մէջ սպառողական, արտադրողական խանութ և այլն ապա մշտապէս յաճախել ժողովներին և ոչ թէ թողնել իրանց ամբողջ բախտը մի քանի այսպէս ասած սիրող առաջնորդների քմահաճոյքներին, որոնք իրանց համար կարիերա սարքելուց բացի, ուրիշ ոչինչ չեն անում։

Մի բան էլ, որ նշմարելի է մեր հայ բանւորների մէջ այն է՝ երբ առաջարկում ես գնալ այս ինչ դասախօսութիւնը լսելու, կամ առաջարկում ես նրան գիրք կամ բանւորական թերթ կարդալու, նրանից հետեւեալ պատասխանն ես ստանում. «Պրօֆէսօր, դասախօս չը պիտի դառնամ հօ»։

Արտ. Բաթումեանց

*) Տեսէք բերած ստատիստիկան։

## ԳԻՒՂԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԻՑ

Ղազախի գաւառից։

Շամշադինի Չինչին գիւղում 1907 թ. նոյեմբերի մօտաւորապէս 10—20, գողանում են գիւղացի Սաքի Թումանց և Փօստինի աղայ Սերգոյի 7—8 ապրանքը (կով, եզը, ձի...)։ Անցնում է մի ամբողջ տարի, կորած ապրանքը չեն գտնում։ Տանուտէր «Բօղին» աշխատում է ամեն կերպ գիւղացոց կորած ապրանքները գտնել և գտնում է։ Մի քանի օր սրանից առաջ տանուտէր պ. «Բօղին» մտնում է նոյն գիւղացի Ղազար Ցակորեանցի տունը և ասում. «Այ Ղազար, բանդ խարաբայ՝ քեզ վրա մի մեծ գործ են վճռում, մի 7—8 ապրանքի գողութիւն. բեր մի 20 մանէթ տուր տանք սուդեաներին, բայքա տակով անենք»։ Թեղճ գիւղացին թռում է ապշած. բայց, որովհետև վախենում է, որ տեղի ունեցի կարող են վճռել՝ եթէ մի բան իրենց չտայ, համաձայնւելով ասում է պ. «Բօղուն», որ այս բոլորին փող չկայ մօտը։ Գ. տանուտէրը յիշեցնում է, որ նա, Ղազարը, այսօր իր ձին ծախել է։ Ինչպէս երևում է պ. «Բօղին» խեղճ գիւղացուն հետևել է, թէ երբ նորա ձեռքին փող կլինի... և ահա առիթը կար. ահա Ղազարը ձին ծախել էր։ Սերեճ, քանի որ ձեռքին փող կայ, պէտք է օգտւել և օգտւում է ու ստանում 20 ռ., որպէսզի գործը տակով անի։

Գ. տանուտէրի հեռանալուց յետոյ, Ղազարը մտածում է և տեսնում, որ պ. «Բօղին» իրեն խաբել է, յետևից վազում է, որպէսզի 20 ռ. յետ առնէ, բայց իզուր. Գ. «Բօղին» դալով տուն տեսնում է, որ Ղազարը կարող է ղալմաղալ անել, անմիջապէս գնում է ապրանքատէր Փօստինի տղի և Սաքինի մօտ և ասում. «Այ տղէք, պէտք է ամէնքդ մի 50 մ. տւէք, որ տանք պատաւորներին, որ շուտ անեն վճռեն, եթէ չէ կարող է ապրանքները կորչին»։ Թեղճերը չհասկանալով պ. «Բօղինի» Թակարդը, տալիս են ամէն մէկը 50 ռ.։

Գործը վճռւում է։ Գ. «Բօղին» արբանեակներով գալիս է Ղազարի տունը յայտնում վճիռը և պահանջում բաւարարութիւն տալ։ Ղազարը մերժում է։ Գ. «Բօղին» իր արբանեակներով քշում տանում է խեղճի տաւարը Թւով 9 հատ, որին, իհարկէ, Ղազարը, իր կինը և 12 տարեկան աղջիկը արգելք են հանդիսանում. Նա հրամայում է երեքին էլ ծեծել, —երեքն էլ ծեծւում են։ Խեղճի կինը մինչև հիմայ էլ պառկած է։ Ղազարը տեսնելով, որ 20 ռ., տաւարը ձեռքից գնացին և իրանք էլ լաւ ծեծւեցին—դիմում է ատրիկանութեան։ Ատրիկանութիւնը նշանակում է քննութիւն, որից պարզւում է, որ այն օրը, երբ գողացւում է Փօստինի աղայ Սերգոյի և Սաքի Թումեանցի տաւարը, Ղազարը, վիրաւորւելով աչքից, տանը հիւանդ պառկած է լինում և գողութիւն չէր կարող անել։ Ատրիկանութիւնը հետ է դարձնում Ղազարի տաւարը և արդար ճանաչում։ Գիւղի մեծամասնութիւնը այդ բոլորը տանուտէրութեամբ տանում է, իսկ փոքրամասնութիւնը թէպէտ հանդգամ չէ կարողանում տանել, չի էլ կարողանում բողոքել, որովհետև կազմակերպւած չէ։

Ընկեր գիւղացիներ, ժամանակ է կազմակերպւելու, միայն աշխատաւորական, գիւ-

digitised by A.R.A.R.@

ցացիական միութիւնները կարող են ձեզ առաջարկել զանազան վաւերական պատուտէրական անձնութիւններից:

Գիւղի

## ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բալախանի, Նոյեմբերի 20-ին

Յարգոյ խմբագիր!

Այսօր ձեր Թերթի № 11-ում մեծ զարմանքով կարդացինք ինսինուացիաներով լի մի նամակ պ. Հ. Ղազարեանցի դէմ. Մենք ներքոյ ստորագրեալներս, վաղուց ի վեր ծառայում ենք և պ. Ղազարեանցին ճանաչում ենք միայն լաւ կողմից. այդ պատճառով՝ էլ բարոյական պարտք ենք համարում յայտնել, որ խմբագրութեանդ ուղարկուածն մոլորեցրել է ձեզ և ընթերցողներին. Նա ըստ երեւոյթին, մի անբարեխիղճ անձնաւորութիւն է. Փ. Հ. Ղազարեանը մեզ հետ միշտ եղել է ընկեր նեղ օրերին, յաճախ օգնութեան է հասել. Նամակում յիշուած 9 ական րուբլի տուգանքը նշանակելու մէջ Ղազարեանը ոչ մի դեր չի խաղացել, այլ ընդհակառակը նրա շնորհիւ էր, որ բժիշկը համաձայնեց պակասեցնել տուգանքը 1 ական րուբլիով. Կրկնակօշիկները տալու կամ չը տալու հարցը կախուած էր ոչ պ. Ղազարեանից, այլ կառավարչից, որը պաշտօնական նամակով յանձնել էր գլխաւոր բժշկին, որ այլ եւս կրկնակօշիկ չի տրուի. Երկու ծառայողներ չեն հեռացրուած ինչպէս յիշուած է նամակում, այլ դրանք ժամանակաւոր էին, մինը հիւանդ ծառայողի էր փոխարինում, իսկ միւսը արձակուրդ գնացողի՝ և հետեւապէս երբ նրանք (հիւանդ ու արձակուրդ գնացող) գործի եկան, այդ երկուսը պիտի բնականաբար հեռանային. Յիշուած Գեղէօնին ճիշտ է թակել են, բայց դա սարքած բան չէ Ղազարեանի կողմից. Դէպքը այսպէս էր, Գեղէօնը կանանց և կողմնակի մարդկանց ներկայութեամբ սկսեց փողոցային հայհոյանքներ թափել պ. Ղազարեանի գլխին. Մեր ընկերներից մէկը չկարողացաւ տանել այդ և մի երկու հարուած հասցրեց նրան. Իհարկէ մենք չենք արդարացնում այդ ընկերոջ արած բանը, բայց եղաւ... Շատ կխնդրենք խմբագրութեանդ, ճշմարտութիւնը ձեզ կամ ընթերցողներին բոլորովին պարզած լինելու համար ձեր մօտակայ համարներից մէկում լոյս ընծայել մեր այս նամակը պ. Ղազարեանցի արատաւորուած պատիւը վերականգնելու համար. Ի միջի այլոց յայտնում ենք, որ պ. Ղազարեանը մինչև օրս մեզ հետ վարուել է մարդավայել և ոչ մի ճնշում չի գործադրել.

Մարտիրոս Գրիգորեանց Դ. Յովսէփեանց Միքայել Գրիգորեանց.

## ՓՈՍՏ-ԱՐԿՂ

ԲԱԼԱԽԱՆԻ, Ա. Ք-ին և Պ. Ա-ին. Կարող էք համոզուած լինել, որ ձեր գրութիւնները չեն տպագրել ըստ կենսական պատճառներով.

ԲԻԲԻ-ՀԷՅԲԱԹ, Մ. Ա. Բ-ին. Դուք աւելի լաւ կանեք ձեր գրական փորձերը և ասացէք չարժադրեք զանազան կազմակերպ խմբակցութիւններ և ընկերի պաշտպանութեան համար. Շարունակեցէք գրել կեանքից.

ԲԱԳՈՒ, Ս. Յակոբեանին. Անյարմար էր տպել գրեթէ անհատական կէտերից.

Խմբագիր հրատարակիչ՝
ՍԵԴՐԱԿ ՇԱՀ-ՓԱՐՈՆԵԱՆ

Редакторъ издатель:
Седракъ Шахъ-Паронянъ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ստ. Լիսիցեանի, Յ. Թումանեանի և Լ. Շանթի հեղինակութեամբ լոյս են տեսել

„ԼՈՒՍԱԲԵՐ"

Երրորդ տարուան եւ առաջին քերականութեան
Ա. մաս—30 կոպ., Բ. մաս 45 կոպ.
Վաճառվում է՝ Книжный магазинъ „Сотрудникъ", Баку, Ольгинская 9,

ԲԺԻՇԿ
ԳՐ. ՍԱՂԵԱՆ
Ներքին, երեխաների և մարմ. հիւանդութիւններ
Ընդունում է առ. 9-12, երեկ. 5-7
Հասցէն՝ մալականի այգու դիմաց
Прачешная ул. № 6.

ԲԺԻՇԿ
Յովհան Գաբրիէլեան
ՄԱՍՆԱԳԷՏ
մանկական հիւանդութիւնների
Հասցէ՝ Большая Морская д. Межлумова
ընդունում է 8—9 առաւօտեան
6—8 երեկոյեան.

Баку. Тип. Н. А. Эриванцова.

digitised by A.R.A.R.@